



Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԱՋԳԱՅԻՆ, ԻԼՆԵՍԻԲԵԿԵՆ ԵՒ ԳՐԵԳՈՐԻԱՆԵՆ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ. ԹԻՒ 9.

ՇԼՁԱՆ ՄԻԱՄԵԱՅ

1 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1866

ԱՋԳԱՅԻՆ

ԳԵՐԱՊԱՏԻ ՅԱՅՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ս. ԱԹՈՌՈՅՍ ԿԱԼՈՒԱԾՈՅ ՔՆՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ԵԼՆԵԼԸ ԴԵՊ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

ՍՈՒՐԲ Յակոբեանց Աթոռոյս կալ ուածոց խնդիրը, որ դարաւոր ժամանակէ ի վեր անխնամ ու բարձի թողի եղած է պէսպէս պատճառներով ու արդէլքներով, այս օրուան օրս ժամանակիս պարագայից նկատմամբ՝ մեծ և կարեւոր խնդրոյ տեղ անցած է: Դամանակիս պարագայից նկատմամբ ըսինք, վասն զի թող պատմութիւնը՝ որ մեր ըսելիքը կը հաստատէ, այլ եւ ասկէ ոչ շատ տարի յառաջ սուրբ Աթոռոյս տարեկան մօրից գլխաւոր ու իբր միակ ազբիւր՝ բարեպաշտ ու ջերմեռանդ ուխտաւորաց շնորհած ողորմութեանց արդ-

իւնքն եղած են միշտ. եւ նախորդ դարուց մէջ եւս՝ երբ երջանկայիշատակ Գրիգոր Պարոնտէր և Գրիգոր Շղթայակիր լուսահոգի Պատրիարքաց⁽¹⁾ ժամանակ Ս. Աթոռը անտանելի պարտուց տակ վերջին շունչը հասած կը հեծէր, ուխտաւորաց եւ բարեպաշտ ազգայնոց առատաշնորհ

(1) Գրիգոր Պարոնտէր և Շղթայակիր, մասնաւոր վերջինս այս, զգալով որ Ս. Աթոռոյ պայծառութիւնն և շնութիւնը առաւելագոյն իւր սեպհական կալուածներուն հաստատուն արդեամբքը կրնայ ըլլալ, առաջինը սկսաւ այգիներ տնկել տալ և ձիթենեաց պարտեղներ գնել, բայց ասոնք հազիւ թէ երանելոյն կենացը հետ մէկտեղ տարեցան. վասն զի իւր մահուանէն ետեւ քիչ քիչ տիրեցին անոնց ֆէլ-

ողորմութեամբը յաջողեցան գրեթէ ի գերութենէ ազատել յիշեալ վանքը : Աստի թէ այս օրինակ պարտքերու ժամանակ և թէ հասարակ տարիները միաբանութեան ներքին եւ արտաքին բոլոր ծախքերը բարեպաշտից նսւէրներովը կը հոգացուէին . այս պատճառաւ հեռաւոր կալուածոց վերայ յատուկ խնամք տանելու , զանոնք շատցընելու ու արդիւնաւորելու մասին անհոգ ու անտարբեր էին նախորդ Պատրիարքները :

Այն անտարբերութեան վիճակը աւելի զգալի եղաւ վերջին 30 տարուան մէջ , երբ Եգիպտոսի նման բարեից վիճակը սուրբ Լ. Թոռոյս իրաւունքները խրկելու զլացաւ , պատճառելով նոյն արդեամբք վիճակին ազգայնոցը ուսումնական և բարոյական կեանքը բարւոքել , որոյ նկարագիրը յայտնի է հասարակութեան : Այտացաւ ասոր վերայ միաբանութիւն , վասն զի ասոնք ուրիշ քաղաքաց շատերուն նման բարեպաշտից նուիրած կալուածքներ չէին , այլ սուրբ Լ. Թոռոյս յատուկ իւր աշխատութեամբը և խնայողութիւն աւելցուցած գու-

մարներովը գնուած , շինուած ու նորոգուած կալուածներ , ինչպէս բոլոր տեղացի ժողովուրդը կը վկայէ ճշմարտութեանս : Եգիպտոսի սոյն ընթացքը յիշելովս կ'ուզեմ իմացընել թէ , այս օրինակ անակնկալ դէպք մի որ մեծ ու զգալի կորուստ մի եւ նուազութիւն տարեկան արդեանց սուրբ Լ. Թոռոյս կը համարի , երեք Պատրիարքաց սրտին՝ Օգբարիայի , Կիրակոսի և Զովհաննու մեծ ցաւ ու կսկիծ պատճառելով , յուսահատեցան և իսպառ զանց առին ուրիշ կողմեր եղած կալուածոց արդիւնքներն ու հաշիւները պահանջելու գանձապետներէն , որոնց մէջ եթէ հաւատարիմներ կային , նոքա միայն ի բարեպաշտ ոգւոյ շարժեալ ինքնին կը խրկէին գոյացած արդիւնքը ի Ս. Լ. Թոռոս :

Իայց վերջապէս ժամանակն եկաւ զանոնք փնտրուելու . բարեպաշտ ու խտաւորաց պակասութիւնը և անոնց շնորհած դարպասական ողորմութեանուազութիւնը մէկ երկու տարիէ ի վեր միաբանութեանս ուշը գրաւեր էր . սուրբ Լ. Թոռոյս ապագայն իրենց աչքին խտար ու սպառնալից մթնոլորտի մի մէջ սկսաւ երեւալ , մանաւանդ երբ սուրբ քաղաքիս մէջ կենսական պիտոյից թանկութիւնը օրէ օր սաստկացաւ : Ամենապատիւ Սրբազան Պատրիարքը որ միաբանութեան հետ լաւ զգացած էր Ս. Լ. Թոռոյս ապառնի վիճակին ծանրութիւնը , ապառնի մի որ ներկայ էր միանգամայն , Պատրիարքական Գահը եւ լած օրէն ի վեր առաջին մտածմունքըրած էր իրեն սոյն վիճակիս ճար մի հոգալը : Ինդիրը որչափ մեծ էր եւ ազգային , և ապագային ըսած սպառնալիքս որչափ որ սկսեր էր Ս. Լ. Թոռոյս վերայ տեղալ , ուսկէ ժամանա-

լան զիւրացիք , և ժամանակը զանոնք բոլորովին աւրեց : Ծերունի Ֆելահք կը յուզընեն հիմա վէճէճէ զիւրի մօտ քանի մի այգեստաններ , ու կըսեն թէ ժամանակաւ Մար Եղազուպիմն էին անոնք : Իսկ Շրջ. Թայպիթ առաջնոյն փորձովը ուրիշ աւելի հաստատուն կալուածներ թողուլ , ու շինել տուաւ ի Զոյգպէ շտեմարաններ , տուներ ու խանութներ , որոնք արդէն եղածներուն հետ մէկտեղ բաւական արդիւնք կը մատակարարէին յայնժամ : Բայց ասոնք ժամանակ անցնելով , հնացել խորխորէին , և արժաւորութեան վարձք բերելու համար բաւական նորոգութեան ու ծախուց կարօտ էին : Անցեալ տարի քօլէրային պատճառաւ ժամանակ չունեցաւ Ամենապատիւ Սրբազան Հայրը անոնց հոգ տանելու . այս տարի մայիս ամսոյն հրաման խրկեց Զոյգպէու արժաւորապաիւ Տեալին հարկաւոր շինութիւններն ընելու , որոնք պէտք կը շարունակուին , և թէպէտ բաւական ծախք պիտի ըլլայ , սակայն անոնց տարեկան արդիւնքն ալ կրկնապատկուելուն տարակոյս չկայ :

կաւոր կերպիւ մի գէթ աղատելու համար փոխառութեանց դիմեր էր, այսու ամենայնիւ Ազգին ներկայ վիճակը և անոր նոր սկզբունքները յաջողութեան յոյս չցուցնելով, ստիպեցին զՆորին Սրբազնութիւնը իւր կալուածքներուն գիմելու : Առաջին տարին քանի մի մերձակայ քաղաքները յատուկ վարդապետ խրկելով, եղած կալուածքները քննութեան առաւ ու անոնց արդիւնքը ըստ կարի ապահովուց :

Իսկ ուղեւորներին Հայաստանի կողմերն եւս մէկը խրկել որ իւր հոգեւոր այցելութեամբը՝ միանգամայն Ս. Աթուոյս հին ու նոր կալուածները աչքէ անցընէ, զանոնք ի գիր արձանագրենէ, գոյացած արդիւնքները ժողովէ և զանոնք աւելի շահաւոր դիրքի մէջ դնէ : Այս պաշտօնիս համար ըստ ընտրութեան Տեօրէն յաջորդօրէն որոշուեցաւ Գերապատիւ Յակոբ Եպիսկոպոսը յամթեցի, որ անցեալ յուլիս ամսոյ 14ին մեկնեցաւ աստի : Իւր շրջագայելու տեղուանքը պիտի ըլլայ Լադաքիա յէն սկսեալ մինչեւ ի Տիգրանակերտ, Սըղերտ, Սշու վիճակը և անտի մինչեւ ի Կարին : Եւ որպէս զի այս օրինակ այցելութիւն մի ժողովրդեան մէջ տարածայն կարծիքներու տեղիք չտայ, ինչպէս որ հաւանական է, վասն որոյ Գեր. Սրբազան Այցելու Հօր յատուկ շրջաբերական գիր մի տրուեցաւ, որոյ մէջ նշանակուած է իւր պաշտօնն ու գործքը, և անոնց մէ ի զատ խստիւ արգելեալ է իրեն և ոչ խերեւէչ մի պահանջելու որ և իցէ անձէ, բաց ի անոնց իրենց յօժար կամօքը շնորհած նուէրներէն : Յիշեալ շրջաբերական կոնդակին օրինակը արժան կը համարիմք հոս մէջ բերել ի գիտութիւն հասարակու-

թեան, միանգամայն և սուրբ Աթուոյս կողմէն իրեն տրուած կնքեալ տուժարին ճակատը եղած հրահանգին օրինակը, որ է այս.

Յայրապետութիւն. — Առաջիկայ տուժարս յանձնուեցաւ Գեր. Յակոբ Եպիսկոպոս Սրբազան եղբօր ի կողմանէ Ամենապատիւ Տ. Տ. Եսայի Սրբազան Պատրիարքի և Տեօրէն ժողովոյ, որպէս զի յիշեալ Սրբազան եղբայր Ս. Աթուոյս կալուածոց համար շրջագայած քաղաքներն ու դեղանոցք ինչ արդիւնք որ ընդունելու ըլլայ, զանոնք ամենն ալ կարգաւ մի առ մի ասոր մէջ նշանակէ : Աստի առաջիկայ տուժարս պիտի պարունակէ՝ 1. Ս. Աթուոյս կալուածներն ընդունած արդիւնքները : 2. Եկեղեցեաց մէջ յանուն Ս. Աթուոյս հաւաքուած գանձմանակոց արդիւնքը : 3. Բարեպաշտ ժողովրդոց նուիրած թէ կառակներ և թէ իւղագին և մանագին ողորմութիւնները, եւայլն : 4. Ս. Աթուոյս նորահաստատ հաւթեանց թանգարանին համար ազգասէր անձանց շնորհած թէ հին գրանիւնք և թէ ուրիշ հաւթիւններ, նմանապէս ձեռագիր հին մատենաներ և մատենագրանի վերաբերեալ գրուածքները :

Յիշեալ արդիւնքները և իրենակամ շնորհուած նուէրները մանրամասնաբար իւրաքանչիւր քաղաքի կամ գիւղի սեփականեալ յատուկ էջերու մէջ ի գիր անցընէին յետոյ, նոյն քաղաքի կամ գիւղի երեւելի ազգայինները և քահանայք զոյն աչքէ անցընելով՝ աւանց ճշդութիւնը պիտի վաւերացընեն իրենց յատուկ կնքովն ու ստորագրութեամբք :

Յերասարէ, ի Ս. Աթու (Սորաբէալ և ինչու ի Յիւրթեանց Սրբազան Պատրիարքի և ի 11 Յուլի 1866 ի Տեօրէն ժողովոյ) :

ԸՆԴԱԲԵՐԱԿԱՆԻՆ ՕՐԻՆԱԿԸ

Ի սուրբ և փառաւորեալ, Աստուածազարդ և մեծապայծառ շնորհածաւալ և Քրիստոսակոխ սրբոյ քաղաքէս Լըուսաղէմէ, և յամենայն նր և փրկագործ սնորինական Տեղեացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, եւայլն, եւայլն : Եւ ի սոցին սպասուոր ի Տէր ԵՍԱՅԻ Արքեպիսկոպոսէ և Պատրիարքէ սրբոյ Առաքելական Աթուոյս Լըուսաղէմի : Յորոց ժամանեալ հասցէ աստուածային օրհնութիւն, շնորհք և ողորմութիւն ի վերայ տիրապահ Քաղաքիդ և սուրբ

եկեղեցեացդ, և նոցին Վերապատիւ
Լուսնորդ և քաջարթուն հովիւ,
Լստուածաշնորհ և հոգեհարազատ
եղբօր մերոյ ի Տէր. այլ և աւագա-
մեծար քահանայից և ամենայն սրբա-
կրօն երիցանց, մաքրասուն սարկա-
ւագաց, քաղցրանուագ դպրաց, եւ
սրբոյ Լթուոյս բազմահաւատարիմ
և մեծարոյ փոխանորդի վախճաց եւ
գանձապետ յարգելեաց, ազգասէր
իշխան Լղայից և բարեպաշտօն Լն-
գամոց ազգային ժողովոց, եւայլն,
եւայլն:

Օհնի սոյն աստուածային օրհ-
նութեանս կը յայտնեմք ջերմեռանդ
սիրելեացդ, որ ամեն կարգ ու կա-
նօն, որոնք եկեղեցական օրէնքէն ի
զատ սահմանուած կան եկեղեցեաց
մէջ, անոնց ամենուն սկզբնաւորու-
թիւնը Քրիստոսական սուրբ հաւա-
տոյս հաստատութեանը հետ մէկ
տեղ եղած են, որպէս զի եկեղե-
ցական պաշտամունքները դիւրանան
և հաստատուն մնալով աւելի օգուտ
ստանան ու ծաղկին: Լյս նպատա-
կաւ երբ Քրիստոս Տէրն մեր յաչ-
խարհի վերայ էր, աշակերտներէն մին
գանձապետ կարգած էր. գանձապե-
տութիւնը գանձանակ կ'ենթադրէ,
և գանձանակը ժողովրդեան կամա-
ւոր սուրբը կը նշանակէ. այս բարի
սովորութիւնը կար նաեւ Քրիստոսի
ժամանակ, որ անշուշտ հին եկեղե-
ցիէն մնացած էր, նոյնը մնաց հաս-
տատուն Լաւքերոց ժամանակ ալ,
ինչպէս կը վկայէ Պօղոս Սրբազան Լ-
աւքեալը Հռովմայեցւոց և Կորնթ-
թացւոց Ա. թղթին մէջ. որոյ ժա-
մանակ իւրաքանչիւր քաղաքաց մէջ
յատուկ պաշտօնեայներ կը հաստա-
տէին, որպէս զի հաւատացելոց շնոր-
հած տուրքը հաւաքելով Արքուսա-
ղէմ խրկէն այն տեղ գտնուած սրբ-

բոց, այսինքն հաւատացեալ եղբարց
և երիցանց մարմնաւոր պիտոյքը հո-
գալու համար, որոնց պաշտօնն էր բու-
րոր հաւատացելոց համար աղօթել
ի սուրբ տեղիսն և քարոզել զփրկու-
թիւնն որ եղեւ Քրիստոսիւ Յիսու-
սիւ: Սոյն աւանդութիւնը յաջոր-
դաբար և դարէ ի դար հասած կը
գտնեմք մինչեւ մեր օրը, որ ըսել է
1866 տարիէն ի վեր է հաստատուած
է ամեն առաքելական Լթուներուն
և վանօրէից մէջ, և սոյնը պիտի մնայ
հաստատուն մինչեւ ցդալուստ Փրկի-
չին որ հեղինակ կը համարուի գան-
ձանակաց՝ իւր արեամբը հիմնած ե-
կեղեցւոյն մէջ: Եւ որովհետեւ մի
միայն գանձանակի արդիւնքով չկր-
նար կառավարուիլ սուրբ Լթուս
և միաբանութիւնս, որ կարգեալ է
ի կողմանէ ազգին ի պահպանութիւն
սրբազան Տեղեաց, վասն որոյ բարե-
պաշտ ժողովրդոց մէջէն ոմանք ջեր-
մեռանդ սիրով իրենց գոյքը կամ
անշարժ ստացուածքը սուրբ Լթու-
ոյս թողուցած են կտակաւ. որոնք
եթէ խնամօք նայուելու ըլլան, թէ՛
յիշատակ ընողաց անունը անմոռաց
կը մնայ և թէ՛ սուրբ Լթուս բաւա-
կան կ'արդիւնաւորի: Սեր դիտաւո-
րութիւնը տարիէ մի ի վեր է սուրբ
Լթուոյս սեփական բոլոր կալուած-
ները կարգի դնել էր. հազիւ թէ
քանի մը մօտաւոր քաղաքաց մէջ ե-
ղածները կարողացանք քննել և ա-
նոնց արդիւնքը ապահովել. իսկ հե-
ռաւոր տեղեր գտնուածներուն հա-
մար միտք ունէինք բանիբուն եկե-
ղեցական մի յուզարկել ի կողմանէ
սուրբ Լթուոյս: Ինչպէս ահա այս
անգամ Տիգրանակերտցի Վերապա-
տիւ Յակօր Եպիսկոպոս հոգեհա-
րազատ եղբայրն մեր ի Տէր՝ խրկե-
ցինք այդ կողմերը, իշխանութիւն

տալով իւրեան, որ ստորտած տեղ-
ուանքը թէ՛ քաղաք և թէ՛ գիւղ, ուր
ուրեք որ սուրբ Աթոռոյս վերաբեր-
եալ տուն, խանութ, մաղաղա, պար-
տէզ, այգի, ձիթենի և ուրիշ որ և
է անշարժ ստացուածք որ կայ, զա-
նոնք բոլորն ալ փնտրէ, գտնէ, ի
գիր առնու, և անոնց արդիւնքը՝ որ-
քան ժամանակէն ի վեր որ չէ ըն-
դունած սուրբ Աթոռոյս, պահանջէ
իրենց վերակացուէն կամ փոխանոր-
դէն, և իւր յատուկ տուժարին մէջ
նշանակէ հանդերձ ստորագրութիւն
յանձնողին: Այլ եթէ յիշեալ կալ-
ուածները աւելի արդիւնաւոր ըլլա-
լու համար թէ՛ ութիւններ կը պա-
հանջէ, արտօնութիւն շնորհեցինք
Վերապատիւ Յակոբ Այլիսիոպոսեղ
բօր մերոյ, որ խորհրդակցութեամբ
մեր փոխանորդին կամ գանձապետին
և ուրիշ քանի մի երեւելի ազգայ-
նոց, կարգադրէ և պահանջած տնօ-
րէնութիւնը ի գործ դնէ, առանց
շինութիւն ընելու, որոյ համար պէտք
է սուրբ Աթոռոյս կողմէն հրաման
ստանայ:

Այլորորդ պարտաւորութիւնը պի-
տի ըլլայ մեր Վեր, եղբօր, որ իւ-
րաքանչիւր քաղաքի մէջ ի բնէ անտի
յանուն սուրբ Աթոռոյս հաստատ-
ուած գանձանակաց արդիւնքը ժողո-
վէ, իւրաքանչիւր տեղւոյն զատ զատ
նշանակելով իւր տուժարին մէջ: Իսկ
ի գանձանակէն եթէ պատահելու ըլ-
լայ օրհնեալ ժողովրդոց մէջէն մէ-
կուն բարեպաշտ սրտէն բխելով թէ՛
իւղագին կամ մոմագին և թէ՛ պատա-
րագուց շնորհել (I), Աթոռոյս, և կամ
կտակ մի ընել ըստ սովորութեան
հոգեւէր նախնեաց մերոյ, յիշեալ
Վերապատիւ եղբօր արտօնութիւն
շնորհեցինք զանոնք ալ ընդունել սի-
րով և նշանակել իւր տեղը, առանց

ինքը յորդորելու կամ ստիպելու զժո-
ղովուրդը այն օրինակ նուէրներու
համար: Իւրաքանչիւր քաղաքի թէ՛
կալուածներէն և թէ՛ գանձանակէն
ու ժողովրդոց կամաւոր տուրքերէն
ինչ արդիւնք որ ընդունելու ըլլայ
մեր Վերապատիւ եղբայրը, ինչպէս
վերը ըսինք, քաղաքին երեւելիներէն
քանի մի հոգի հանդերձ մեր փոխա-
նորդովն ու գանձապետով՝ պէտք է
որ իրենց ստորագրութեամբ և կըն-
քով, կամ տուժարին մէջ և կամ ա-
ռանձին թղթով նշանակեն նոյնը ու
հաստատեն արդեանց որքանութիւ-
նը, առ ի գիտութիւն յապագայ ժա-
մանակի:

Այլորին՝ բայց գլխաւոր պարտա-
ւորութիւն մի եւս ունի շնորհա-
զարդ սուրբ Աղբայրն մեր, այն է իւ-
րաքանչիւր գնացած տեղը, օրհնեալ
ժողովուրդը հոգեւորապէս մխիթա-
րելէն և սուրբ երկրիս Վրիստոսա-
պարգեւ օրհնութիւնները անոնց նը-
ւիրելէն յետոյ, հոն գտնուած թէ՛
ուսումնարանաց և թէ՛ ծաղկոց ըս-
ուած դպրոցներուն այցելութեան
ելնել. անոնց յառաջադիմութիւն-
ները և ուսումնական արդիւնքները
աչքէ անցընել, քաջալերել զբարե-
ջան վարժապետները և յորդորել զու-
սումնասէր աշակերտները, և իւրա-
քանչիւր դպրոցաց թանգարաննե-
րուն սուրբ Աթոռոյս մէջ տպուած
գրքերէն ընծայել ըստ չափու և ըստ
պիտոյից, որոնցմէ ըստ բաւականին
իրեն յանձնած եմք: Արովհետեւ ե-
կեղեցւոյ պայծառութեան սկիզբը
ուսումնարաններէն կ'ըլլան, վասն ո-
րոյ ինչպէս ամեն քաղաքացի իրենց
վարժատանը, նոյնպէս և մեք պար-
տաւոր եմք բոլոր ազգային վարժա-
տանց յառաջադիմութեան համար
ըստ կարի փոյթ և ինամբ ցուցնել:

որպէս զի եկեղեցին եւս իւր պայ-
ծառութիւնը ստանայ, գիտնական
քահանաներով ու բարեպաշտ և ու-
սումնական եկեղեցականներով: Այս
է ահաւասիկ մեր ջանքը և մեր նը-
պատակը, որոյ համար ստիպուած
եմք սուրբ Աթուոյս կալուածներուն
արդիւնքը շատցընել ու ապահովել
ձեռամբ հաւատարիմ փոխանորդաց
մերոց եւ գանձապետաց, եւ ուրիշ
ինչ բարի խորհուրդներ ու հայրա-
կան օգտակար զգացմունքներ որ ու-
նիմք, Գերապատիւ Սրբազան եղ-
բայրն մեր կրնայ իբրեւ թարգման
ձեզ զանոնք հաղորդել, ինչպէս եւ
մեր հայրական ողջոյնը և առաքելա-
կան օրհնութիւնները, զոր ի գիմաց
մեր կը մատուցանէ օրհնեալ եկեղե-
ցականացդ և ջերմեռանդ ժողովուր-
դոց. որոց շնորհեսցէ Փրկիչն մեր
Յիսուս զխաղաղութիւն իւր և ըզ-
շնորհս տնօրինական խորհրդոց՝ չար-
չարանաց և յարութեան իւրոյ, ո-
րում փառք յաւիտեանս, ամէն:

Գրեցաւ օրհնութեան և այցե-
լութեան շրջաբերական կոնդակս ի
սուրբ քաղաքն Լըռուսողէմ, յաթոռն
սուրբ Առաքելոցն Յակոբեանց, ի 11
յուլիսի 1866:

Գ Ի Տ Ե Կ Ը Ն Ի

Վ Ա Ռ Օ Դ

Վառօգին բաղադրութիւնը ինչ
պէս յայտնի է, բորակով, ծծմբով ու
ածխով կ'ըլլայ, և իւր յատկութիւնն
է՝ բռնկելով շատ մի կազ դուրս ար-
ձակել: Թէ որ սոյն բաղադրածոյ
մարմինը նեղ տեղ մի փակելու ըլ-
լաս, կազին տարածական զօրութիւ-
նը սաստիկ ճնշում մի կը ներգործէ

իւր չորս կողմը եղած արգելքներուն,
ու ահագին ճայթմամբ զանոնք կը
թռցընէ. երբ կազերուն եղած տեղ-
ւոյն ծակ մի թողուս և շարժուն ի-
քով մի նոյն ծակը խցես, կազերը
բունն սաստիկութեամբ կը փախչին,
և իրենց գիմացը արդէլք եղող ինչ
որ կայ կը թռցընեն:

Վառօգը խիստ ճայթուն պէտք
չէ ըլլայ. վասն զի երբ իւր բոլոր մա-
սերուն մէջ մէկէն ի մէկ կրակ առնե-
լու ըլլայ, կազերուն տարածական
ներգործութիւնը այնպէս սաստիկ է՝
որ զէնքը ճաթեցընելով կը թռցընէ:
Իսկ ընդհակառակը թէ որ բաւական
ճայթուն ալ չըլլայ, զէնքին մէջ նետ-
ուելու համար դրած նիւթդ, ա-
ռանց բոլորովին այրելու՝ դուրս կը
նետուի: Ինտիք վառօգն այն է, որ
իւր նետիչ զօրութիւնը ոչ վայրկե-
նաբար (մէկէն ի մէկ), այլ յաջոր-
դաբար ներգործէ նիւթին վերայ:
Այն է ընտիր վառօգ, որ զէնքին
մէջ եղած նիւթը որքան ժամանակի
մէջ դուրս պիտի նետուի, այնքան
ժամանակի մէջ վառօգն սլամբողջ
վառի: Բաժնեբէս կ'իմացուի որ
վառօգին կիրառութեան մէջ եղած
զանազանութենէ, անոնց սրախու-
թեանը մէջ ալ զանազանութիւն մի
կ'ենթադրուի: Վառօգ մի որքան
չոր ու պինդ է, այնքան աւելի գիւ-
րավառ կ'ըլլայ. և լաւ տեսակ ըլլալը
անկէ կ'իմացուի, որ թղթի վերայ
դրած ժամանակդ բռնկցընելու ըլ-
լաս, առանց թուղթը այրելու ու
նշան մի վերան թողլոյ՝ վառի, երբ
այնքան ամուր կ'ըլլայ՝ որ մատուը
ներովդ չէս կրնար ճղմել, երբ ձեռ-
քիդ դրսի կողմը չաղտոտէր:

Գաղղիոյ մէջ երեք տեսակ վառօգ
կը շինուի. պատերազմի, որսի և հան-
քի, որոնց բաղադրութիւն է այսպէս

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԱՌՕԴ

որ իւր Բաժնոցի՝ Բնութեան, և պարտագա-
ւոր հրացանի :

Բորակ	75
Օծումբ	12, 50
Լծումբ	12, 50
	<hr/>
	100, 00

ՈՐՄԻ ՎԱՌՕԴ

որ իւր Բաժնոցի՝ Բարակ, ամենաբարակ և
արհեստի :

Բորակ	76, 90
Օծումբ	9, 60
Լծումբ	13, 50
	<hr/>
	100, 00

ՀԱՆՔԻ ՎԱՌՕԴ

Բորակ	62, 00
Օծումբ	20, 00
Լծումբ	18, 00
	<hr/>
	100, 00

Այս կերպ կազմութիւնը վեց գրե-
խաւոր գործողութիւն կ'ունենայ .
փշրուիլ, իրարու խառնուիլ, կակ-
ղանալ, ճզմուիլ, հատիկներու բաժ-
նուիլ, չորնալ :

Թնդանութի վառօդին գիւտը Չի-
նացւոց, Արաբացւոց, Հնդկաց,
Ռօճեր Պագոնին ու ալմանացի Պեր-
թոլտ Շլաբց անուն կրօնաւորի և
ուրիշ մարդոց եւս կ'ընծայեն : Կան
ոմանք ալ որ մարդու չեն տար ասոր
գիւտը, այլ ինքնին հրդեհի վերա-
բերեալ նիւթերու բաղադրութենէ
յառաջ եկած է, կ'ըսեն, որոնք յա-
նախն հոգի կը կոչուին : Այս ճշմարիտ
է, որ այս աստիճան կատարելութե-
մինչեւ հասնիլը, շատ ձեւերու մը
տաւ . և այս կերպարանափոխութեց
մէջ բնական հետեւութիւն մի ալ
կը տեսնուի արհեստին զարգանալուն :
Այս տարածուն նիւթոց խառնուրդ-
ները ի սկզբան վառօդին տարբերնե-
րը կը պարունակէին, առանց վառօդ

ըլլալու, և մինչեւ որ այն նիւթերը
չմաքրուեցան չղողուեցան, վառօդի
յատկութիւնը չստացան : Քանի որ
ածուիլը, ծծումբը ու բորակը ան-
մաքուր էին, անհնար էր մէկէն բը-
ռընկիլը . այլ կամայ կամաց և կար-
գաւ կը վառէին, երբ սորվեցան մար-
դիկ մաքրելը, այն ժամանակ վառօ-
դը գտնուեցաւ, սկսան յիշեալ նիւ-
թերը արագապէս բռնկիլ, մեծաքա-
նակ կաղ դուրս արձակելով : Այն ա-
տեն քայլ մի միայն մնացեր էր հրա-
ղէնք ըսուած գործիքներու գործա-
ծել, և ասոր ալ բաւական էր այն
գիպուածներէն մէկը, որոնք գիտու-
թեան գիւտերուն մէջ մեծ զօրու-
թիւն ունին միշտ :

Յայտնի չէ թէ պատերազմական
արհեստին այս կատարելութիւն տը-
ւողն ո՞վ եղաւ, և ոչ ժամանակը ու
տեղը գիտեմք, ուր առջի անգամ
սկսուեցաւ վառօդ գործածիլ : Կան
ոմանք որ կարծեն թէ յունաց կայ-
սերութեան մէկ գաւառին մէջ ըս-
կըսուած ըլլայ երեքտասաներորդ դա-
րուն վերջերը : Չորեքտասաներորդ
դարուն սկիզբէն ի վեր է որ վառօ-
դը միշտ կը շինուի վերոյիշեալ երեք
տեսակ տարբերքներով, և ժամանակ
անցնելով քիչ շատ փոփոխութեամբ
կատարելագործուեցաւ : Անկէ յե-
տոյ մնաց իւր վիճակին մէջ հաստա-
տուն, քիմիականութեան մէջ մէկը
չգտնուեցաւ որ նոր ուժ մի ճայթ-
ման հնարէ : Հիմակուան վառօդը՝
ինչ որ ալ ըլլայ իւր կատարելու-
թիւնը, թերութիւններ ալ ունի, ք-
րոնք վերցընել ուզողը՝ ճշմարիտ ծա-
ռայութիւն մի ըրած կ'ըլլար : Բրու-
սիոյ տէրութեան Թնդանութիւնի գո-
րաց գնդապետ Լիդուարդ Շուլցը
իւր կենաց տասը տարին զոհ ըրաւ
նոր վառօդ մի հնարելու, որ արդի

գործածուած վառօդն իրեն հիմն ըլլալով և մի եւ նոյն որպիսութիւնները ունենալով՝ միայն վտանգներէ ազատ ըլլայ և աւելի աժան գնով շինուի։ Յիշեալ քիմիագէտին հնարած նոր վառօդին բաղադրութեան մէջ գլխաւոր նկատելին սա է որ, մինչեւ հիմայ փայտը ամխածած կը գործածուի որ թթուածին մասը մէջէն հեռանայ, իսկ ինքը չոր փայտ կը գործածէ թթուածին մասը մղիչ ջորութեանը հետ մէկտեղ դնելով, ու աւտով աւելի սաստիկ ճայթում կ'ունենայ վառօդը, և մէջը ծծումբ գընելու ալ հարկ չմնար։

Սոյն սկզբան վերայ հիմնած է Շուլց նոր վառօդը. գոյնը գեղինի կը դարնէ, ու վտանգը հարիւրապատիկ պակաս է քան զհասարակ վառօդին. վասն զի իւր կազմութիւնը գրեթէ խոնաւ ճամբով է։ Այս նոր վառօդէն կրնայ մեծ քանակութեամբ պահուիլ՝ առանց ճայթման վիճակի մէջ ըլլալու, բայց եթէ ըստ չափու պիտոյից։ Ազատ օդոյն մէջ ձայն չհանէր, և գեղեցիկ բոց մի արձակելով կ'այրի։ Կըյուսացուի որ Պ. Շուլցի նորահնար վառօդը տէրութեանց կողմէն շնորհակալութեամբ պիտի ընդունուի, և Բրուսիացի գնդապետն ալ իրեն փառաւոր ասպագայ մի կը ստանայ։

— Նորահնար վառօդին համար տուած տեղեկութեանցս վերայ քանի մի խօսք ալ ասղնաւոր հրացանի համար յարեմ կարծեմ անտեղի չհամարուի։ Սոյն հրացանը որ Բրուսիական բանակին մէջ կը գործածուէր աւիս մի յառաջ, Ամանացւոց լեզուով Օդանապէլէմէր (1) կը կոչուի։ Այս գիւտս որ երեք ամիս առաջ անծանօթ էր, երբ որ հրատարակուեցաւ

Եւրոպայի մէջ ինչպէս բնական է, այլեւ այլ կողմերէ սկսան մրցիլ եւ սոյն նոր գաղափարիս հայրենիք իրենք ըլլալը հռչակել և բուն հեղինակին պարծանքը գողնալ։ Հեղինակին անունը յայտնի է հիմայ, այն է Պ. Յովհաննէս — Նիկողայոս Տրէյս (1) Սմերտացի դարբնի մի որդին։ Հազար ութհարիւր տասնին Փարիզու մէջ աշխատած է Տրէյս, յետոյ Թուրինի գառնալով Սմերտայի մէջ մանր մուր երկաթեղէն գործիքներու խանութ բացաւ, ապա որսի հրացաններու աստիճանի գործարան հաստատեց։ Ասղնաւոր հրացանը առաջին անգամ 1827 ին շինեց, որ բարակ փայտով մի բերնէն կը լեցուէր։ 1828 ին մեքենագէտն իրեն եւ իւր փամփրշտին համար արքունի հրովարտակ (պէրաթ) ստացաւ։ 1836 ին էր որ Տրէյս հնարեց տակի կողմէն լեցնելու հրացանը։ Իւր այս գիւտը 1839 ին Բրուսիոյ Փրետերիկ — Նիյլեօմ Դ. Թագաւորին առաջարկեց, որ 1841 թուին իւր հետեւակազօր բանակին համար շատ մի շինել տուաւ. յետ այնորիկ բոլոր բրուսիական բանակին մէջ ընդհանրացաւ սոյն ասղնաւոր հրացանը, որոյ փորձը յաջողութեամբ տեսնուեցաւ Սաքսի, Պատի և Սլեզուիկ — Շլեսիցի ճակատամարտից մէջ։

Բնթերցողները չձանձրացնելու համար ինչպէս նորահնար վառօդին, նոյնպէս և ասղնաւոր հրացանին կազմութեան ստորագրութիւնը զանց կ'առնեմք. այսչափ միայն կ'ըսեմք՝ որ թէ քիմիական և թէ մեքենական գիտութեան սոյն երկու կատարելութիւնները պատերազմի դաշտին մէջ աւելի մեծ շարժում մի պատճառեւ

(1) Zundnadelgewehr.

(1) M. Jean-Nicolas Dreyse.

ցին, և եթէ ոչ մարդկու թեան՝ գէթ մահուան մեծ բարեկամ և օգնական եղան : Այն վայրկենին մէջ տասն ու երկու անգամ կը նետուի . սովորական հրացանէն աւելի հեռուն կ'երթայ իւր հարուածը . իւր նպատակին հաւատարիմ է, ու նետելու ժամանակ արագութիւնը նոյնպէս աւելի : Ի վերայ այս ամենայնի՝ իւր թերութիւններն ալ ունի . ինքը ծանր է, հինգ քիլոկրամէն աւելի կը կըշռէ . բունը պղտիկ, և այս պակասութիւններով՝ սլաք (սիւնկիւ) բանեցընելու գծուար կու գայ : Արտուի թէ շատ չերթար Վաղղիոյ մէջ նոր դրութիւն մի գտնուած է, որով արդի սովորական հրացանները ասղնաւորի պիտի փոխարկին առանց անոր թերութիւնները ունենալու : Պատերազմական արհեստները որչափ կը բարակնան, անձնական քաջութիւնը այնքան կը նուազի . վասն որոյ իրաւամբ ըսած է գաղղիացի գնդապետին մէկը . « Թէ որ Վրուսիացիք աւել ունին, մենք ալ դերձան ունիմք՝ մեր սլաքները » :

Յօդուածն իս վերջացընեմք նետիչ զէնքերու անունները կարգաւ մէջ բերելով, որոնք միջին դարէն սկսեալ մինչեւ մեր օրերը գործածուեցան :

Աղեղ, — բաղիստր —, պատրուգաւոր հրացան, — զսպանակաւոր հրացան, — կայծքարով հրացան, — հողմաձիգ հրացան, — սանդաւոր հրացան, — պարզ նետուելիք հրացան, — տակի կողմէն նետուելիք հրացան, — բերնէն լեցուելիք ասղնաւոր հրացան, — տակէն լեցուելիք ասղնաւոր հրացան :

— Սեր ընթերցողաց շատին յայտնի է հեռագրական արուեստին մէջ մօտերս եղած մեծ ու զգալի փոփոխութիւնն ու յառաջագիմութիւնը,

այսինքն հեռագրական լուր հաղորդել ուղղը անձին բուն իսկ իւր ձեռագրին օրինակը ուղած տեղը ամենայն ճշդութեամբ փոխադրելը : Այս սքանչելի գիւտը Վաղէլլի անունով կրօնաւոր մի հնարած է, և արդէն սկսուած է այս նոր եղանակը ի գործ դրուիլ Փարիզու և խոնի մէջ և քիչ օրէն Փարիզու և Վարսիլիայի մէջ ալ պիտի սկսի, կ'ըսեն, եթէ դեռ ըսկըսուած չէ : Արդարեւ զարմանալի բան է մարդոյս երբ երկու երեք հարիւր մղոն հեռու եղող բարեկամի մի նամակը կը կարգանք բառ առ բառ և մի եւ նոյն տառերը դոր ինքը ըստ կարողութեան կը գծէ : Վարուս յառաջագիմութեան մէկն ալ անշուշտ այս է :

Սուրբ Աւետիս Սիւսան-Լեան վերայ
նոր յարչախոս մի :

Ներկայ իննեւտասներորդ դարս արդարեւ ծնող կրնայ համարիլ նորանոր գիւտից և գիտութեանց յառաջացման՝ յօգուտ տիեզերական գերդաստանին : Ասոնց ամենուն մէջ նշանաւոր է գրչին ըրած յառաջագիմութիւնը քննադատութեան մէջ, որ բանական ուսման մէկ ճիւղն է . և այնքան ընդարձակուած է սոյն ուսմունքս արդի ուսումնականաց մէջ, մինչեւ իւր անուամբը կրնամք քննադատութեան դար անուանել ներկայ դարս : Երբ Եւրոպայի ազգերը նորանոր հնաբքներով կը ջանան իրենց հանձարը ի հանդէս հանել հասարակաց կարծեաց և դատաստանին դիմացը, և հոն իրենց բարոյական կեանաց հետ նիւթական կեանքն ալ ապահովել, և թերեւս մարդկութեան

ալ ճառայութիւն մի քանի կ'ըլլան ,
 Հայր ինչ կ'ընէ . թողլով իւր մշա-
 կութեանց գործիքը . թողլով իւր
 հայրենական օրհնատին գործարանը ,
 թողլով վերջապէս իւր բնածիր հան-
 ճարը , որով կրնար եւրոպացւոց հետ
 հաւասարիլ նորահար և կենցաղօ-
 գուտ գիւտերու մասին , և անոնցմէ
 թերեւս քանի մի քայլ անդին անց-
 նիլ , թողլով բոլոր այս ապրանաց գոր-
 ծիքները , ձեռք կ'առնու գրիչը եւ
 կը սկսի բանագատել , քննադատել ,
 և վերջապէս դատաւիտել . զո՞վ , ո՞վ
 որ դիմացն հանդիպի . ինչո՞ւ համար ,
 վասն զի քննադատութեան դարուն
 մէջ կ'ապրի : Այս նորասիրութեան
 ախտս այնքան ընդհանրացած է ազ-
 գիս մէջ , մինչեւ ձեռքը հազիւ գրիչ
 բռնել կրցող նորահաս պատանին ,
 զայն յափշտակելուն պէս՝ կեղծ ա-
 նուն մի կ'առնու վերան , ու կ'իյնի
 մէջտեղ : Պատկառելի այն գրիչը ,
 մեր սրբազան Նախնեաց թանկագին
 վաստակոց աւանդապահ եղող սուրբ
 գրիչը , որ միմիայն ճշմարտութեան կը
 ծառայէր , ազգային յեղափոխութեւս
 (1861) ժամանակ վատութեան տըղ-
 մին մէջ աղտոտելով , կորսնցուց իւր
 առջի յարգն ու պատիւը : Ներկայ
 պատանեկութիւնը երբ ոտքը դար-
 ցին և շատ անգամ ծաղկոցին շէմի-
 քէն ազատ կը գանէ , կը գահաժլիմէ
 զինքը ուսման հանդիսարանին մէջ .
 գովելի՜ փափաք . այլ վտանգաւոր՝
 թերուս և անփորձ մտաց . վասն զի
 գրիչին կ'առնուն , եւ առանց ա-
 ռաջնորդութեան բանին՝ քննադա-
 տութեան կ'ենեն , վասն որոյ անոր
 օրինաւորութեան սահմանէն դուրս
 ցատկելով ըստ սուածին , յօնք շի-
 նէնք ըսելով՝ կը սկսին մէկին մէկա-
 լին աչքը հանել : Այսպիսի անարգ
 և թերակիրթ գրիչներու համար քը-

նականապէս նիւթ չտրակիր : Ազգա-
 յին յեղափոխութիւնը շատ տեսակ
 ստպարէզներ բացաւ անոնց դիմացը .
 վասն զի ազատ խորհելու սկզբունքը՝
 ազատ խօսելու ծուռ ու սխալ սկըզ-
 բունքն ալ հաստատեց , զօրացաւ ,
 ժամանակն ալ իրեն օգնելով քաջա-
 լերուեցաւ : Երիշտալ բաղմատեսակ
 ստպարէզներուն մէջ ամենէն նշանա-
 ւորն եղաւ սուրբ Աթոռոյս միաբա-
 նութիւնը . վեց , եօթն տարիէն ի
 վեր է բաց կը մնայ սոյն ստպարէզը .
 գրիչը առջի անգամ ձեռք առնողը՝
 կարծես թէ զայն փորձելու համար
 մէկ մի գլուխը հոս կը զարնէ . ինչո՞ւ
 համար . վասն զի դիմացը ոսոխ չկայ .
 ինչո՞ւ համար . վասն զի իւր տղայա-
 կան զէնքը բանի տեղ դնող չկան ,
 վասն զի իւր դիմացն ելնելու ստիպ-
 ուողը փոխանակ զէնքի՝ խաչն ունի
 ձեռքը , փոխանակ անարգական խօս-
 քերու՝ օրհնութիւններ ունի իւր
 բերանը , և վերջին յաղթութեան նը-
 շան իրեն՝ ունի համեստ լռութիւնը
 և հասարակութեան անխաբ միտքն ու
 ողջախոհ սիրտը :

Եւ այց արդեօք մշտնջենապէս լը-
 ութիւն հաճի է պահել որ եւ է
 մարդոյ՝ որ ընկերութեան մէջ կ'ապ-
 րի , որ ընկերութեան հետ ունի յա-
 բաբերութեան կապեր , որ կ'ապրի
 այնպիսի աշխարհի մէջ , ուր ստու-
 թիւնը ճշմարտութեան քօղով յան-
 գէտս կը յարգուի միշտ , ուր իսպառ-
 լութիւնը վատութիւն և շատ ան-
 գամ խոստովանութիւն կը համարուի
 եղած զրպարտութեանց եւ ստու-
 թեանց : Հայ կրօնաւորութիւնը կ'ա-
 շակերտի այն Արդապետին , որ ը-
 սաւ . “ երնէկ ձեզ , երբ նախատեն
 ու հալածեն և ամեն գէշ խօսք սուտ
 տեղը խօսին ձեզ ինձի համար (1) ” :

(1) Յովն . ԺԵ . 23 :

Այս էր ահա Սիաբանու թեանս վե-
հանձնաբար լուելուն պատճառը, և
չուզելը որ Սիօնի էջերը անսխորթ
վէճերու ասպարէզ ըլլան: Բայց երբ
այս օրինակ զրպարտութիւնները այն-
պիսի պարագայներու միջոցին կը պա-
տահին, որ կրնան մեծ գայթակղու-
թիւն տալ բարեպաշտ ազգայիննե-
րու և վեհանձն բարերարներու, ո-
րոնք ձեռքերնին կարկառած են առ-
սուրբ Աթոս, որոնք հաշտ ակամբ
կը նային Սիաբանութեան մի վերայ՝
որոյ բերանը լի է իրենց և բոլոր ազ-
գին համար օրհնութիւններով, եւ
սրտերնին երախտագիտութիւն, երբ
այսպիսի Սիաբանութիւն մի տարա-
պարտ նշաւակ եղած է քանի մի տա-
րիէ ի վեր, չըսեմ՝ յանդուգն՝ այլ
փոքրօքի ու խեղճ գրիչներու դատա-
փետու թեանցը, այն ժամանակ նոյն
ճշմարիտ Վարդապետը մեր լու-
թիւնը խզելու համար ձակու թի կու-
տայ իւր օրինակաւ, որուն երբ Վա-
յիափայի սպասաւորը ապտակ տը-
ւաւ համարձակ խօսելուն համար,
պատասխանեց ու ըսաւ. «Թէ որ ը-
սածս գէշ է՝ վկայէ գէշ ըլլալուն,
իսկ թէ բարի է՝ ինչո՞ւ զիս կը զար-
նես»:

Այս ուրեմն մենք ալ կը հարցը-
նեմք մեր վերջին հրոսակ պատուելի
քննադատին⁽¹⁾, թէ որ սուրբ Յակո-
բայ Աթոռոյս միաբանութիւնը գէշ
է, ինչո՞ւ չվկայեցիր երբ անձամբ ներ-
կայացար մեր ասպարէզին մէջ, բա-
րեկամական ճակատ մի և մտերմա-
կան լեզու մեզ կեղծելով. իսկ թէ
որ բարի է, ինչպէս շատ դէպքերու
մէջ յայտնեցիր և քո հին համոզ-
մունքներդ մէկդի թողլով՝ իրաւունք
կու տայիր մեզ և սխալած կը համա-
րէիր բոլոր զանոնք՝ որք առանց սուրբ

քաղաքս դալու ու ականատես ըլլա-
լու՝ յանիրաւի կը խօսէին ու կը գրէ-
ին անոր գէմ. իսկ թէ որ բարի է՝
կ'ըսեմ, ինչո՞ւ հիմայ անիրաւի գրու-
չաւդ ոչ յաջ և ոչ յահեակ նայելով
կը զարնես զինքը:

Այստեղ Բագրատունեաց պատուե-
լին իրաւունք ունի՞ զրպարտելու ըզ-
Սիաբանութիւնս, մանաւանդ ըզ-
թարգման Արժ. Ներսէս վարդապե-
տը: Այս:— Ինչո՞ւ համար:— Վասն
զի ինքը որ քաջ ուսումնական մի,
Պէպէկի անգղիական դպրոցի աշա-
կերտներէն, եւ լաւ անգղիագէտ,
նաեւ ժամանակաւ Հանդէսի մի գոր-
ծակալութիւն ալ ըրած է եղեր, ա-
կընկալութիւն ունէր սուրբ Աթո-
ռոյս մէջ գոհացուցիչ ամսականաւ
ուսումնական պաշտօն վարելու, եւ
կ'երեւի թէ այս յուսով եկած էր
հոս, ինչպէս ինքը լուեւայն կը հաս-
տատէ իբր ուխտաւոր եկած ըլլալը
ցուցնելով և ոչ ճշմարտապէս ուխտ
ընելու պատճառաւ: Վասն զի հեռի
է անգղիական դպրոցի հայ աշակեր-
տէ ճշմարիտ քրիստոնէական զգաց-
մունքներ տածել իւր սրտին մէջ, որ
արդէն օթեւան եղած է անտարբե-
րութեան կրօնի, պատրուակեալ մո-
լորութիւններու, կեղծաւորութեան
և անձնական շահասիրութեան: Ա-
յստ պատուելին թերեւս կը կարծէ
թէ իւր ակնկալութիւնը ի դերեւ
եղնելուն պատճառը Արժ. Ներսէս
վարդապետն եղած է, որ իբր երե-
ւակայեալ վեցեանց խմբի մի գլուխ
և թարգման սուրբ Աթոռոյս, ազ-
դեցութիւն բանեցուցած է Ամենա-
պատիւ Սրբազան Պատրիարքին սըր-
տին՝ զինքը չընդունելու: Եթէ այս
չէ պատճառ պատուելին կրիցը, կը
խնդրեմ թող ըսէ մեզ, անցեալ տար-
ւոյս 1,500 ուխտաւորաց մէջ ինքը

(1) Տե՛ս Մանդուկէի էջերէն թիւ 116:

միայն գտնուեցաւ միաբանութե՛դէմ
գրող, միթէ իրեն գրչին չափ չկա՞ր
ուրիշ աւելի կտրուկ գրիչ ունեցող
խելքի տէր մարդ մի, քննող միտք մի:
Ինքը դեռ ասկէ չմեկնած հաղորդած
էր անշուշտ սոյն զըպարտութեանց
մէկ մասը նաեւ Օսմանի հանդէսին
խմբագրին, որ միամտութեամբ իւր
121 թուոյն մէջ զանոնք յիշելով խելք
կը սորվեցընէր Սրբազան Պատրիարք
Հօր, և մինչեւ անդամ անոր Լուս-
բեւական պաշտօնը վարելու միամտու-
րէն կը յանդգնէր:

Լշտ պատուելին եթէ իւր բա-
րեկամ և բարերար Պ. Վառ. ինչափ
բարուց հեղուծիւն, և առանց կը-
րից սիրտ մի ունենար և ոգւոյ բա-
րեպաշտութիւն, անտարակայս չպի-
տի յանձն առնոյր դիմախօսելու Ս.
Լթոռոյն միաբանութեան դէմ, որ
զինքը իբրեւ ճշմարիտ քրիստոնեայ
հայ ընդունեց, իբր ազգասէր մի
նկատեց, և իբր բարեպաշտ՝ թերեւս
կարեկցեցաւ ալ հետը: Չեմք ուզեր
իւր մէջ բերած զըպարտութեանց
նիւթերը հոս կրկնելով զանոնք մի
առ մի ջրել, նախ՝ երկարութենէ
փախչելով, երկրորդ՝ անոր համար որ

հասարակութիւնը շատ կարգալով
այս օրինակ պարսաւանաց յօդուած-
ներ, անալի պարբերութիւններ, վա-
տահամբաւութեան ճառեր, ճան-
չած է անոնց արժէքը, և գիտէ թէ
ի՞նչ աստիճանի յարգ ընծայել պէտք
է անոնց, և գրեթէ այսպիսի յօդ-
ուածներու քարան առնուած է: Եթէ
ողջախոհ հասարակութե՛ վերայ չու-
նենայինք այս վատահուծիւնը և ե-
թէ օրհնեալ Լզգիս առ սուրբ Լթո-
ռըս ունեցած ճշմարիտ համոզմանը
միամիտ չըլլայինք, այս տեսակ գրիչ-
ներու պատասխանելու հոգը վրանիս
պիտի ծանրանայր: Եւս էր պատճա-
ռը որ անցեալները Չիլինկիրեան Յա-
կոբ վարդապետի ստորագրութեամբ
տպուած պարսաւագրքին անտանելի
բարբանջմունքներուն և տարօրինակ
հաշիւներուն չուղեցինք պատասխա-
նել: Չսխալեցանք մեր վատահու-
ծեանը մէջ, Լզգային Վարչութիւ-
նը ճանչնալով անոր ստութիւնները,
իւր արհամարհութեամբը հատու-
ցում ըրաւ Չիլինկիրեանին, որ ու-
րիշ մասնաւոր անձանց կողմէ ալ կը-
րեց իւր արժանաւոր փոփոխութիւն-
ները ի պարծանս իւր պատուոյն:

ԻՂՁ ՈԳԻՈՅ ԸՌՍՈՒՐԲՆ ՍԵՂԻՄ Թ

Ըռ. քեզ, Սաղիմ, աղէկիզեալ, իղձ 'ի բերանս, ո՛հ, պատարուն,
Թռեայ ոգով բարձուսի լերանց, 'ի Վարագայ քաղցր Հայրենոյն,
Ընդ Ըրաբայ Սաբայ արքայս, կոխեմ զշրթունս յաղքատ մարիկդ,
Ոչ ըստ նոցա ոսկի, կնդրուկ, միայն տամ քեզ բոլոր սրտիկս:

(1) Սոյն չափաբերական յօդուածոյս հեղինակ Ըր-
ժանապատիւ Եղիշէ վարդապետը, որ Գերապատիւ
Խորմեան Մկրտիչ վարդապետի աշակերտներէն է,
քանի մի շաբաթէ ի վեր սուրբ քաղաքս ուխտի ե-
կած ըլլալով, օգոստոսի վերջերը մեկնեցաւ ի Կոստան:

գընուպոյլս, ուսկէ պիտի վերադառնայ ի Վարագ-
յուխտ իւր: Յիշեալ ուսումնական և շնորհազարդ
վարդապետը ազգասիրութեամբ յանձնառու եղաւ
Սիօնի գործակալութիւնը Վանայ քաղաքի և անոր
վեճակին մէջ:

Սիրտ որ մանուկ մատաղ տիոց փղձկեալ վառէր ողորմ 'ի լաց ,
զԱյր քո ցածուն ողջագութեալ , տեղի ծննդեանդ ընդ հէգ հովուաց ,
է՛ր Բէթլէհէմ , սիրոյդ ջերմին արեան յորդեաց գետ մեր յաշխարհ ,
Աւալ թաւալ կտրիճքն Հայոց , ախ , ուն 'ի ձիգ գրկեցին մահ :

Օտերն Արագաց , Վարագ , Գրգուռ , ընդ Արտոսի հառաջք ետուն ,
ջոհ էն քաջերս , Օրհն անմահ , հա՛ սէգն Սասիս եւս տայ հեծիւն ,
Վասպուրական փոյթ 'ի ծագացն , ուստի , Սաղիմ , հասի առ քեզ ,
Կարօտդ յոսկերս հիւժեալ 'ի վաղ , թառաջս առ կարմրիկ Յիսուսդ հեզ :

Բնդ վէհ նախնեացս մեծահաւատ , կայծիկ մի եւս յինէն ընկալ ,
Որ արդ արտօսը ի կուրծս չըջիմ , զպերճն թողեալ Վան վարդավառ ,
Նուիրական որչափ որ քեզ Հայկայ քնար հնչէ Սասեաց ,
Այլ ախ ձայնիկ հիգոյս նուաղ , յայրիդ , Տէր իմ , հողս տայ հառաջ :

Հողոյդ , Սաղիմ , մեռնիմ քարսուտ . ուր բոկիկ շուրջ եկ Սեսիայն ,
Ո՛հ , զի անմեղ դառնուկ Աստուածն , 'ի վէրս անմռունչ չեբարձ կական ,
Քեզ , Գողգոթայդ սարսափելի , ղենարան , է՛հ , ահաւորին ,
Կողկող 'ի դէմս յերեսս անկեալ , լիզեմ զքարն՝ արեամբ Փրկչին :

Կուրծքս կարեւէր յոտս Խաչելոյդ կամ , ցօղ աչացս շնորհեա բուժիչ ,
Սիրոյդ ծարաւ այրէ մրկէ զսիրտ հիգոյս , բարձեալ ախ ձիչ ,
Փուշ պսակիդ և պատանոյդ տամ ես համբոյր , տապանդ 'ի գիրկս ,
Ախ , Աստուած իմ , Աստուած Յիսուս , ունայն չդառնամ հէգ Հայրենիքս :

Բոցով սիրոյդ վառի սիրտ իմ , զոր քեզ նուիրեմ ընդ քնարիս ,
Քո սուրբ Շիրմիդ զոհեմ զանձն իմ , Գողգոթայիդ ձօնեմ զհոգիս ,
Թագ անթառամ Հայկայ գլխոյն , սուրբըդ Յակօբ վէհ Գլխագիր ,
Ա՛ռ զիզձս իմ յերիկամանցս , տուր Տեառն հաշտել ընդ մեր երկիր :

Կայց , զի մեկնիմ ես լալագին , թողեալ զվայրըդ մշտալոյս ,
Այլ ընդ ղեփիւն Վանայ սարից յուղեմ զհաւատս , զսէր , զոյս ,
Ախ հեռանամ յիմ քաղցր երկիր , Աւետեաց սուրբ , մնա՛ , լուսնիկ ,
Ի Հայաստան , ցօղեա , Տէր , գութ . թէ ոչ՝ չեն պէտք ինձ կեանք դառնիկ :

յԱՆՈՒՍԱԴԵՅ, 25 յուլի 1866 :

ԵՂԵՂԻ ՎԱՐԴԱՊԵՏ

Ս. ՍԵՐՈՒՄԵՆԻԱՆ ՎԱՆԵՅԻ , յուլիէն Վարագայ :

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Սարգսիս-Բեկ-Նուրի-Բեկ-Ս. Գրիգորի Շէրայի Պարիսի Ս. Արմենի
յԱՆՈՒՍԱԴԵՅ Ի Կ. Պօլս :

(Տես թիւ 8. Էրես 122.)

Եւ անտի գնացաք ի սուրբ Աստուածածնի եկեղեցին , և անդ լուաք

զմահ Տեառն Աբրահամու հայրապետին թէքիրտաղցւոյ , որ ի սուրբ Լիւթիածին ի նոր կիրակէին առ Աստուած փոխեալ և թաղեալ են ի Շուղակաթ . հոգւոյ նորա Աստուած ուղորմի : Եւ անտի գնացաք յԱւսիւտար . և յետ քանի աւուրց վասն տնի գիւտի նշխարաց սրբոյն Գրիգորի

մերոյ ի ղուսաւորչին ի Վալաթիա գընացաք . և անտի ելեալ եկաք յԱւսկուտար ի վանքն մեր . զտօն Վարդաւառին անդ կատարեցաք . մեղաւորս ժամարար :

Եւ մինչդեռ անդ էաք , ի սուրբ Երմիաճնայ երկու վարդապետք եկին՝ Թովմայ և Սկրտիչ անուամբ , և նուիրակն և պարօն Մկրտչն և այլք . յետոյ և մեր մահտեսի Ղալայքն , և բազմակնիք Տահլար մի եգին առաջի մեր , յորում զմեզ խնդրեալ էին լինել Վաթուղիկոս . և իմ երեք օր պայման խնդրեալ զնոսա յղեցի . բայց Պատրիարք վարդապետին և մեր մահտեսեացն ի ծածուկ ասացի , թէ այս երեք անգամ եղեւ որ վասն այսմ իրի զմեզ խնդրեն . բայց անհնար է ինձ լինել , զի անարժան եմ : Եւ զկնի երկից աւուրցն եկաք ի սուրբ Եստուածածնի եկեղեցին , և յայտնի առաջի ամենեցուն հրաժարեցայ , և յոչ ասելն իմ , ապա այն եկող վարդապետքն բերին և Տահլար մի այլ գրեալ թէ նա յանձն չառնու և չլինի , զմահեցի Վազար վարդապետն կր խնդրեմք և ոչ զայլ սք : Եւ յետ բազմաց ասից և խօսից , կնքեցի մեղաւորս նախ զհաւանութեան գիրն , որ եւ ի վերայ նորա հաստատեցաւ Վաթուղիկոսութիւնն : Եւ իմ ելեալ անտի փութով գնացի յԱւսկուտար , զի մի զընցն բազմասցի , և զՏահլարն յիշմիր յղեցաք առ Վազար վարդապետն , զի ելեալ գնասցէ ի սուրբ Վահն :

Եւ յետ աւուրց ինչ անցելոց՝ յօրն ուրբաթ , որ ի վաղիւն (չփետոսի) . Ժողովոյն տօնն էր , Վայմախամ (չկէն) Սէհմէտ փաշան , որ նախ մաքսապետ էր , թելադրութեամբ լատինացւոց մեծին սաստիկ հրաման յղեալ էր առ Պատրիարք վարդապետն , թէ ի Հայոց եկեղեցիսն պատուէր

տուր , զի զՍիւ հրաշալւոյ յետին երեք տուն շարականն մի ասիցեն , և նա յահէ պատուէր ետ չասել , որ և զամենայն ոչ ասացին . և Սիւ հրաշալի ասելն խափանեցաւ ի Ստամբուլ , և եղեւ այն չար սովորութիւն , և մեք յայնմ գիշերի յեկեղեցին ոչ գնացաք , այլ տրտմութեամբ և լալով զօրն անցուցաք :

Եւ ի պահոց երեքշաբաթին քահանայք և եկեղեցապանք եկին ըզմեզ հրաւիրեցին ի տօն սրբոյ եկեղեցւոյ . և ի չորեքշաբթի միամիտ ելեալ գնացաք ի սուրբ Եստուածածնի եկեղեցին , և տեսաք զաղաղակն եւ զշփոթ յոյժ ի մէջ նոցա վասն ոչ ասելոյն զերեք տունն . և մինչեւ խաղաղութիւն եղեւ՝ Եստուծոյ է գիտելն թէ զինչ կրեցաք : Եւ զսուրբ տօն Վերափոխման մօր Տեառն անդ կատարեցաք . և եկաք ի Պալատուսուրբ Հրեշտակապետաց եկեղեցին , և կրկին փութով անտի եկաք ի սուրբ Եստուածածնի եկեղեցին առ ի տեսանել զուխտաւորաց նաւի պատրաստութիւնն : Եւ ի սեպտեմբերի երեք ի տօնի Երկիր ժողովոյն սրբոյ՝ Եստուծով նաւն ել և գնաց , և ինոյն օրն լուաք թէ յԱւսկուտար կեսարացիք քանի մի ոգիք զՍիւ հրաշալին սացեալք են յեկեղեցին . և իմացուցեալ բռնաւորին՝ վեց հոգի ի քուրէն ետ , ահարկանելով համայնից : Եւ մեք ի սուրբ Հրեշտակապետն եկաք , և իշխանօք գնացաք ի Վաղըթխանայն , և զամենայն քայքայեալ շինուածսն տեսաք , և զարմացմամբ հիացաք ընդ բազում խաբէ կերտումն և ընդ վստիմաղկի աւերումն : Եւ զկնի աւուրց ինչ հրաւիրմամբ սուրբ Վեորդայ եկեղեցւոյ քահանայից եւ իշխանաց ի սեպտեմբերի տաճն եւ հինգ եկաք անդ , և խաչ գիւտի կի-

րակին գնացաք ի մահտեսի Սեղբես-
տրոս աղայի էալին . երկու օր անդ
մնալով , և գնացաք յԱսկուտար . և
անտի ի նոյնմբերի չորս եկաք ի Պա-
լատու եկեղեցին , զտօն սրբոց Հրեշ-
տակապետացն անդ կատարելով . եւ
յետոյ զաղբատու թիւնս մեր նոցա
յայանեցաք , և յօրն կիրակէին ծա-
նուցմամբ սկսաք խաարիւ հաւաքել .
զոր Տէրն ամենայնի զբարին յաջողե-
ցէ . ամէն :

Եւ մինչդեռ աստ ի Պալատն է-
աք , ի դեկտեմբերի տասն , Սկէզբը
խոց մեծն դարձեալ ի պատերազմէն՝
ընդ երեկս եմուտ ի քաղաքս . և ի
սոյն ամսոյ տասներկու օրն , փոխու-
նորդն արքայի՝ Սոսուէն օղլի կոչե-
ցեալն մեծ սանձախով երեւելի փառօք
եւ ալայի- եմուտ ի քաղաքս , և գը-
նաց ի պալատն արքունի , և այլ ոչ
ել , զի առին զսանձախն և զկնիքն ի նը-
մանէ , և յընչից մերկացուցեալ տա-
րագրեցին ի Սէլէնիկ . և փոխանակ
նորա եղեւ ժանտն խայմախում՝ հա-
կառակն մերս եկեղեցւոյ և օրինաց .
և զարմանք կալաւ զամենեւին : Եւ
ի սոյն ամսոյ , ի կիրակի լոյս երկու-
շաբթի , ի չորրորդում ժամու դիշե-
րոյն յարեւելեան կողմն սրբոց Հրեշ-
տակապետաց եկեղեցւոյն մերձ եղեւ
սասաիկ էանդն , և բազում տունք և
խանութք և մահտեսի Սեղբոնի տունն
սյրեցան . բայց շնորհօքն Աստուծոյ
և բարեխօսութեամբ մեծաց սրբոց
Հրեշտակապետացն՝ սուրբ եկեղե-
ցին ազատեցաւ , և գոհացաք զԱս-
տուծոյ . և մեք զօր ինչ ժողովեալ
էաք տուաք սուրբ եկեղեցւոյն , չորս
հարիւր զուրուշ , զի այնպէս խօստա-
ցաք յայնմ ժամու նեղութեան , և
Աստուծով կատարեցաք : Եւ անտի
ելեալ դատարկ և խղճուկ եկաք ի նբ
Աստուածածնի եկեղեցին , և զտօն

սուրբ Օննդեան Տեառն մերոյ անդ
կատարեցաք ընդ առաւօտն . մեղա-
ւորս ժամարար :

Եւ ի յունվարի ինն գնացաք ի
սուրբ Վեորդայ եկեղեցին , և ի նոյն
ամսոյ քսանի լուաք թէ Ֆէրմանի շա-
վաշ գնաց յԱրզրում առ ի բերել
ինչալով աստ զԼաթոլիկոսացու Վա-
ղար վարդապետն . զի տեղւոյ փա-
շայն ոչ է թողեալ գնալ ի սուրբ Եջ-
միածին , թէ Ֆէրման ոչ ես առեալ
գնալոյ , անդ արգելեալ և աստ արդ
արարեալ . վասն որոյ գնացին ի բե-
րել ի Ստամպոլ . և մեր ի սուրբ Աստ-
ուածածնի եկեղեցին եկեալ շատ աշ-
խատեցաք առ ի դարձուցանել զշա-
վաշն կաշառս բազումս խոստանալով ,
և չեղեւ հնար : Եւ ի փետրվարի եր-
կու լուաք թէ ըմբռնող փաշայն մեռ-
եալ է , և ինքն ազատեալ գնացեալ
է . և հասեալ անդ՝ ձեռնադրեալ
Լաթոլիկոս և նստեալ ի սուրբ Աթո-
ւըն . փառք փրկողին :

Ի յաջորդն :

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Յուլիս ամսոյ 6 ին Աւստրիոյ Վե-
հափառ Կայսեր Ֆրանսօս Օղէֆ Ա.
տարեդարձը խիստ փառաւորութե
կատարեցաւ ի սուրբ քաղաքս նոյն
տէրութեանը հոյակապ հիւպատո-
սարանին մէջ : Երուսաղէմի վսեմա-
փայլ կառավարիչը ոչ միայն ի պաշ-
տօնէ այցելութեան երթալով սովու-
րական բարեմաղթութիւնները ը-
րաւ , այլ եւ զինուորական երաժըշ-
տաց խումբը խրկած էր հոն , որ դե-
ղեցիկ ներդաշնակութեամբը թէ ըզ-
հանդիսաւորները զուարճացոյց եւ
թէ մեծ ուստիւ ըրաւ բարեկամտե-
րութեան ներկայացուցիչ մեծաւա-

տիւ Վասքալ Յակոբ աղա Սուրառ-
եանին, որ ինչպէս ուրիշ անգամ ը-
սած եմք, Աստուրիոյ հիւպատոսարա-
նի քարտուղարն ըլլալով՝ այս անգամ
մեծապատիւ Վալքէր հիւպատոսը
հայրենիքը մեկնելուն՝ իւր տեղը փո-
խանորդ կարգէց :

— Յիշեալ թուականէն երկու օր
առաջ, Աղէքսանդրիոյ աւստրիացի
երեւելի վաճառականի մի խանութ
գողեր մտնելով, և զարդուց վերա-
բերեալ թանկագին ապրանքներ գող-
ցած ըլլալով, ինչպէս ուրիշ տեղեր՝
նոյնպէս եւ հոս լուր խրկուած էր
առ յիշեալ մեծապատիւ փոխ — հիւ-
պատոս Յակոբ աղայն, որ անմիջա-
պէս հետազօտութեան ետեւէ լինե-
լով՝ քանի մի կտոր բան յայտնեց,
զորոնք հոս ժամագործի ծախած էին
անարդ գիներով, և իրենք աներե-
ւոյթ եղած էին : Յիշեալ ապրանք-
ները ձեռք բերելով՝ խրկեց իւր տի-
րոջը :

— () Դոստոս ամսոյն 15ին քաղա-
քացի այլազգի երիտասարդի մի ըս-
պաննուած մարմինը բերին հոս, որ
15 օր առաջ Թամարացի ըսուած վը-
րանաբնակ ժողովրդոց քով գացած
էր առուտուրի համար իւր մէկ ըն-
կերոջը հետ : Այս վերջինը իմանա-
լով անոր մօտակայ վրանի տակ չա-
րաչար սպաննուիլը, անմիջապէս ձի
հեծնելով կը փախչի՝ հետը ունելով
200 մաճառ ոսկին, զոր ընկերին քով
կարծելով սպաններ էին : Չարագոր-
ծը Յորդանանու կողմերը շունչը առ-
նելով՝ ազատ կը համարի իւր հետա-
մուտներէն :

— Աղէքսանդրիա բնակող կեսա-
րացի Աշոդեան մեծապատիւ և բա-
րեպաշտօն Յակոբ աղայն, որ անց-
եալները սուրբ Աթոռոյս մէջ տըպ-

ուած գրքերէն մէկ մէկ օրինակ նը-
ւէր ըրած էր Թալասու գալոցին,
այս անգամ եւս բարեհաճեցաւ մէկ
օրինակ Սիօն նուիրել յիշեալ գալո-
ցի Արշակունեաց ընկերութեան :

Ամենապատիւ Տ. Տ. Եսայի Սըր-
բազան Պատրիարքը օգոստոս ամսոյ
21 ին ի Յոպպէ մեկնեցաւ, որոյ նը-
պատակն է՝ եղած և ըլլալիք շինու-
թիւններն ու նորոգութիւնները աչ-
քէ անցնել :

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՃՔ

Կիրք քան թէ ճշմարտութիւն՝ ա-
ռաջնորդեն լեզուի և գրչի բաղմաց :

Փառասիրութեան և ընչաքաղցու-
թեան կիրք չճերանան երբէք :

Փառասէրք կարգեն զգնացս իւր-
եանց ոչ ըստ միտս՝ այլ ըստ օգտի
իւրեանց :

() Երէք չեն յառաջատես ամենայն
դիպուածոց, վասն որոյ իշխանաւորք
կարող են զթերին ընուլ զօրինացն,
և եւս փոփոխութիւն իսկ մուծանել :

Են արք՝ որք քաջ գիտեն ձգել ըզ-
տիմար բաղմութիւնն ի զարմացումն
իւրեանց, այլ են ապարդիւն :

Օգր շուք ոչ ստանան մեծարու-
անձինք, եթէ փոխանակ յաչաց հա-
նելոյ զմիմեանս ստորաքարչ չարու-
թեամբ, ջանայցեն ընդհակառակն
բարձրացուցանել զարարս միմեանց
փոփոխակի :

Սեծարանք ընծայեալք առաքինու-
թեան, ճշմարիտ տանջանք են նա-
խանձու :

Համարձակութիւն ընդ գիտու-
թեան լծորդեալ է վտանգաբեր,
ընդ անդիտութեան՝ եւ մահաբեր :